Ալեքսանդր Ծատուրյան

Արտամաշ ժամերն . . .

Սրտամաշ ժամերն անցան, վերջապես,
Ա՛խ, ինչպես պայծառ շողում է արև.
Սևաթույր ամպերն, հաղթված զորքի պես
Փախել, պահվել են սարերի ետև:
Եվ շուրջս կրկին ազատ, համարձակ,
Հարավի փարթամ բնության գրկում
Եռում է կյանքը: Ահա ներդաշնակ
Հյուսում է տաղեր ծառերի խորքում
Երգիչ-բլբուլը. նորան ձայնակից
Անթիվ թռչուններ, ասես, մրցելով,
Այս ու այն ծառից, թփերի տակից
Օդն են թնդացնում զողտրիկ երգերով.
Եվ վարդի թփեր, ծառ, ծաղիկ ու խոտ
Փոթորկից հետո կյանք առած նորից,
ժպտում են ուրախ, սփռում անուշ հոտ.
Անուշ զովություն փչում է ծովից...
Եվ այդ ընդհանուր սթափմունքի մեջ,
Կարծես, լսում եմ մի ձայն հուսատու.
«Ո՛րբ ազգի երգիչ, վիշտը չէ՞ անվերջ.
«Զվարթ, լույս օրեր կըտեսնես և՛ դու»:

1896, Գուրզուֆ